

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԻԻ, 2. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 13

21 ՄԱՅԻՍ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրական վարչեպետներ		ՏՕՄԻՆՈ
Արեղաձագն յԱրմառ		ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻՋԱԿՅԻ
Գեղի նամակներ		ԹՎԱՏԻՆՅԻՆ
Բիերբրնդ Մօրկան (իր կեանքն ու գործունեությունը)		Ֆ.—
Բանաստեղծություններ		
Ախարաներու շուրհն ակ		Մ. Կ. ՄԵՇԱՏՈՒՐԵԱՆ
Սիրսու		ՊԱՐԷՏ
Իսկականը ու իրականը Գեղարուեստի մեջ		Տ. Կ. Զ.

Խմբագրական Նօթեր:— Զանազանք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բառսուն դր. 5 և գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Զրաճի կամ 5 Բուլլի: Թղթաստանի ծախքը Խմբագրութեան վրայ: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշնչի պայմաններով:

Ձեռ-Քէ. ԿՐ ՇԱԽՈՒԻ ՀԱՏՐ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیاده غلطاده (ماسیس) غرضی اداره

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաւոր

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելին դարձած է, ա՛յնքան բաղմամբիւ աւստկներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բուռն կան դժուար է լու ընտրութիւն մը ընել: Այդ աւստկներէն մմանք նշանաւոր են իր օթորժահամ եւ քաղցրաբոյր, մանք ալ թէեւ նոյնքան խորժելի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իր կազդուրիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յաղակութիւններն ունին որոնք զինքը կը գանգաւենն ուրիշ, աւստկներէ:



Սակայն կալ թէյ մը, որ այդ աւստկներէն ամէնէն կորեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համահոտ եւ մանուշակազդուրիչ եւ զօրացուցիչ անզուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաքոնի քիլը, որ այդ աւստկ-

թեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Յամբուեան եւ իսագուլեան քիլի մեծ վաճառատունը, իր բաղմամբիւ յաճախորդաց ծոռայութիւն մը մտաւոցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճարանական զուտ թէյ մասնաւոր եւ զսկական աւստկերով ու կը հրաւիրէ օգտուել այս առիթէն բոլոր անոնք, որ կը փափաքին ունենալ թէյ մը:

Համով, հոսով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկաւան, չինական, Սէյլան եւ Ճաւայի ամեալու տեսակ թէյեր:

3—10

Ուստորութիւն մարգայի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնիւտաբու (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարուան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յորգոյ յաճախորդներուն թէ բնականորէ փախադրած է Պէքեար փաղոց թիւ 18, իաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ շօրագոյն մէթաւերով շղային եւ հօգեկան ու երեւակայական ամէս տեսակ հրեանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անաւանուած աչքի երեսի եւ ուսերու ագեղ եւ ալամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ յետջ եկած շղային խռովումները եւ երիտաւորական մօլիքները, ինչպէս նաեւ գինեմօլիքը, մօրիֆնամօլիքը եւայլն:

Կիրակիներէն զառ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրբաթ օրերը ձրիաբար կը շարժանէ վկայեալ աղքատները: 3—10



ՅՈՎՍԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ (ՄԵՂՐՈՒՆԻ)

ՍՍՍՄՆՍՐՈՅԺ

Մուշաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Իեսպանատան

Բերա, Մեծ Փաղոց, Թագսիմ, քիւ 61

Չքանեան արաքսման

Պալպալեան ամէն օր ալուայի ամէն տեսակ հիւանդութիւններով առաւապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գինեւրուան օր եւ է ժամուան կարելի է դիմել: Պալպալեան կ'երայխաւորէ իր լեցուցած ու շինած ալուանները: Ցորեկները ալուայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ: Քաշել տուողին կամքէն կախեալ է: Վկայեալ առամաւորութեան Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն դարմանատան մէջ: Աղփասներուն ձրի 3—10

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԳԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՖՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՈԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապաւովագրեալներու եղած վճարում 300 միլիոն ֆր.

Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՖՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ

62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74%⁰, որով ՔԷՍ ԲԱԳԵՌՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը զեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տուած երաշխաւորութիւնէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ծառնոսայի ամէնէն նշանաւոր դասաւորներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ծառնոսայի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՅԼԷՌ. Դոանոսայի անդիք ընկերութեան վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԶԷՄ. նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թաւրոյի Տնօրէն Ք. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՔ

Պոլիս, Սուլթան-Համամ, Բասափ Բաթրոնքոզլու

Ընկերութեան վաւ տնտեսութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ.—Շահաւոր դիմելիք տրուի այն ֆնիչիք որ կարեւոր արդիւնք մը ի տրուած ուղիով անցնուի:

3—10

Ա.ԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն տեսակ բժնաֆիյէ ապրանց

Մեծ—Շուկայ, Բիւրճիկներու դրան կից, Թ. 41—43

Նոյնպէս, արանց եւ կանաչի ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պոլիս, Սուլթան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ Թօնաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանաչի ճաշակաւոր հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն ազնուութիւն, եւ դիւրամատ չելի դիւներու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Ադամ վարդեան մեծապէս գահ թողուցած է իր բազմաթիւ յաճախորդները:

Կ'որոճէ որ Շուկայ, Կլուզ, ամէն ընտանայեղէ անգամ մը այդ երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

3—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳԱՒԱՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարմանէ օտաժօքի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հիւն եւ նոր գաղաղան ախտերը, Այս վերջին ախտերը՝ առանց օտաժօքի խանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը Զարեքաթի օրերը միայն ձգել: 3—10

01-5 : 1945-1946 : 1947-1948 : 1949-1950 : 1951-1952 : 1953-1954 : 1955-1956 : 1957-1958 : 1959-1960 : 1961-1962 : 1963-1964 : 1965-1966 : 1967-1968 : 1969-1970 : 1971-1972 : 1973-1974 : 1975-1976 : 1977-1978 : 1979-1980 : 1981-1982 : 1983-1984 : 1985-1986 : 1987-1988 : 1989-1990 : 1991-1992 : 1993-1994 : 1995-1996 : 1997-1998 : 1999-2000 : 2001-2002 : 2003-2004 : 2005-2006 : 2007-2008 : 2009-2010 : 2011-2012 : 2013-2014 : 2015-2016 : 2017-2018 : 2019-2020 : 2021-2022 : 2023-2024 : 2025-2026 : 2027-2028 : 2029-2030 : 2031-2032 : 2033-2034 : 2035-2036 : 2037-2038 : 2039-2040 : 2041-2042 : 2043-2044 : 2045-2046 : 2047-2048 : 2049-2050 : 2051-2052 : 2053-2054 : 2055-2056 : 2057-2058 : 2059-2060 : 2061-2062 : 2063-2064 : 2065-2066 : 2067-2068 : 2069-2070 : 2071-2072 : 2073-2074 : 2075-2076 : 2077-2078 : 2079-2080 : 2081-2082 : 2083-2084 : 2085-2086 : 2087-2088 : 2089-2090 : 2091-2092 : 2093-2094 : 2095-2096 : 2097-2098 : 2099-2100 : 2101-2102 : 2103-2104 : 2105-2106 : 2107-2108 : 2109-2110 : 2111-2112 : 2113-2114 : 2115-2116 : 2117-2118 : 2119-2120 : 2121-2122 : 2123-2124 : 2125-2126 : 2127-2128 : 2129-2130 : 2131-2132 : 2133-2134 : 2135-2136 : 2137-2138 : 2139-2140 : 2141-2142 : 2143-2144 : 2145-2146 : 2147-2148 : 2149-2150 : 2151-2152 : 2153-2154 : 2155-2156 : 2157-2158 : 2159-2160 : 2161-2162 : 2163-2164 : 2165-2166 : 2167-2168 : 2169-2170 : 2171-2172 : 2173-2174 : 2175-2176 : 2177-2178 : 2179-2180 : 2181-2182 : 2183-2184 : 2185-2186 : 2187-2188 : 2189-2190 : 2191-2192 : 2193-2194 : 2195-2196 : 2197-2198 : 2199-2200 : 2201-2202 : 2203-2204 : 2205-2206 : 2207-2208 : 2209-2210 : 2211-2212 : 2213-2214 : 2215-2216 : 2217-2218 : 2219-2220 : 2221-2222 : 2223-2224 : 2225-2226 : 2227-2228 : 2229-2230 : 2231-2232 : 2233-2234 : 2235-2236 : 2237-2238 : 2239-2240 : 2241-2242 : 2243-2244 : 2245-2246 : 2247-2248 : 2249-2250 : 2251-2252 : 2253-2254 : 2255-2256 : 2257-2258 : 2259-2260 : 2261-2262 : 2263-2264 : 2265-2266 : 2267-2268 : 2269-2270 : 2271-2272 : 2273-2274 : 2275-2276 : 2277-2278 : 2279-2280 : 2281-2282 : 2283-2284 : 2285-2286 : 2287-2288 : 2289-2290 : 2291-2292 : 2293-2294 : 2295-2296 : 2297-2298 : 2299-2300 : 2301-2302 : 2303-2304 : 2305-2306 : 2307-2308 : 2309-2310 : 2311-2312 : 2313-2314 : 2315-2316 : 2317-2318 : 2319-2320 : 2321-2322 : 2323-2324 : 2325-2326 : 2327-2328 : 2329-2330 : 2331-2332 : 2333-2334 : 2335-2336 : 2337-2338 : 2339-2340 : 2341-2342 : 2343-2344 : 2345-2346 : 2347-2348 : 2349-2350 : 2351-2352 : 2353-2354 : 2355-2356 : 2357-2358 : 2359-2360 : 2361-2362 : 2363-2364 : 2365-2366 : 2367-2368 : 2369-2370 : 2371-2372 : 2373-2374 : 2375-2376 : 2377-2378 : 2379-2380 : 2381-2382 : 2383-2384 : 2385-2386 : 2387-2388 : 2389-2390 : 2391-2392 : 2393-2394 : 2395-2396 : 2397-2398 : 2399-2400 : 2401-2402 : 2403-2404 : 2405-2406 : 2407-2408 : 2409-2410 : 2411-2412 : 2413-2414 : 2415-2416 : 2417-2418 : 2419-2420 : 2421-2422 : 2423-2424 : 2425-2426 : 2427-2428 : 2429-2430 : 2431-2432 : 2433-2434 : 2435-2436 : 2437-2438 : 2439-2440 : 2441-2442 : 2443-2444 : 2445-2446 : 2447-2448 : 2449-2450 : 2451-2452 : 2453-2454 : 2455-2456 : 2457-2458 : 2459-2460 : 2461-2462 : 2463-2464 : 2465-2466 : 2467-2468 : 2469-2470 : 2471-2472 : 2473-2474 : 2475-2476 : 2477-2478 : 2479-2480 : 2481-2482 : 2483-2484 : 2485-2486 : 2487-2488 : 2489-2490 : 2491-2492 : 2493-2494 : 2495-2496 : 2497-2498 : 2499-2500 : 2501-2502 : 2503-2504 : 2505-2506 : 2507-2508 : 2509-2510 : 2511-2512 : 2513-2514 : 2515-2516 : 2517-2518 : 2519-2520 : 2521-2522 : 2523-2524 : 2525-2526 : 2527-2528 : 2529-2530 : 2531-2532 : 2533-2534 : 2535-2536 : 2537-2538 : 2539-2540 : 2541-2542 : 2543-2544 : 2545-2546 : 2547-2548 : 2549-2550 : 2551-2552 : 2553-2554 : 2555-2556 : 2557-2558 : 2559-2560 : 2561-2562 : 2563-2564 : 2565-2566 : 2567-2568 : 2569-2570 : 2571-2572 : 2573-2574 : 2575-2576 : 2577-2578 : 2579-2580 : 2581-2582 : 2583-2584 : 2585-2586 : 2587-2588 : 2589-2590 : 2591-2592 : 2593-2594 : 2595-2596 : 2597-2598 : 2599-2600 : 2601-2602 : 2603-2604 : 2605-2606 : 2607-2608 : 2609-2610 : 2611-2612 : 2613-2614 : 2615-2616 : 2617-2618 : 2619-2620 : 2621-2622 : 2623-2624 : 2625-2626 : 2627-2628 : 2629-2630 : 2631-2632 : 2633-2634 : 2635-2636 : 2637-2638 : 2639-2640 : 2641-2642 : 2643-2644 : 2645-2646 : 2647-2648 : 2649-2650 : 2651-2652 : 2653-2654 : 2655-2656 : 2657-2658 : 2659-2660 : 2661-2662 : 2663-2664 : 2665-2666 : 2667-2668 : 2669-2670 : 2671-2672 : 2673-2674 : 2675-2676 : 2677-2678 : 2679-2680 : 2681-2682 : 2683-2684 : 2685-2686 : 2687-26

ՄԱՍԻՆ

54^ր ՏԱՐԻ, Զ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 13

21 ՄԱՅԻՍ 1905

ԳՐԱԿԱՆ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ

ԲԱՐՔԵՐՈՒ ՇՈՒՐՁԸ

Եթէ պատահի որ, այսօր, մեր մէջէն մէկը ծանօթ գրագէտի մը տունը այցելէ՝ ուրիշ երկրորդ գրողի մը վրայ անոր կարծիքը ուզելու բարի մտադրութեամբ, ապահովապէս պիտի ստանայ պատասխան մը որ շատ պատուաբեր չէ յաճախ ենթակային համար:

Որովհետեւ այս ենթադրութեանս մէջ սխալած ըլլալու երկիւղը չունիմ, կրնամ ուրեմն աւելցնել նաեւ թէ այսօր, գրեթէ առանց կարեւոր բացառութեան մը, մեր գրողները զիրար կը բամբասեն, զիրար կ'անուանարկեն, առանց մէկզմէկու արժանիքը լրջօրէն, գիտակցօրէն գնահատած, քննադատած ըլլալու, առանց զիրար ծանցած, զիրար հասկցած ըլլալու, ինչպէս կըսէի ուրիշ առթիւ: Այն որ ուրիշները կը դատէ, կը ծանցնէ, ինքզինքը դատած, ծանցուցած կ'ըլլայ կ'ըսեն. չգիտեմ թէ այս անտեղի վաճառ, այս անիմաստ վերապահութիւնն է որ կը մղեն գրողը ուրիշ գրողի մը վրայ գէշ խօսելու, à priori կարծիք յայտնելու, զայն վար զարնելու և անոր կարողութիւնը ուրանալու:

Ինչ որ ալ ըլլայ սակայն, սա յայտնի ճշմարտութիւնը կայ այսօր մէջտեղ թէ մեր գրական մարդիկ, կամ Պալղաքի բառերով, մեր gendettները, մէկզմէկու համար՝ չունին եղբայրակցական զգացումը, մտերմութեան գաղափարը: Մասնաւոր հաճոյք մը զգալ կերեւնան ուրիշի մը վրայ գէշ խօսած ատենին: Զեմ

վարանիր ըսել թէ օտար գրականութիւններու մէջն ալ մասամբ դադրած է հիմա գոյութիւն ունենալէ գրական այն բարեկամութիւնը որ ասպետական հով մը ունէր և որ ժամանակին, Ֆլօպէռներու, Ժօրժ Սաններու օրով մեծ առաքինութեանց կարգը դասուած էր. բայց գոնէ դեռ մինչև այսօր նոյն այդ բարեկամութիւնը մեռեալ տառ մը նկատուած չէ և անոր շնորհիւն է որ կարգ մը երիտասարդ գրողներ կը տիրանան համբաւի, կը ներկայացուին հասարակութեան: Գանի կեանքի պայքարը կը դժուարանայ, գրական մարդիկ ալ, սովորական մահկանացուներու պէս, պարզ արհեստաւորներու պէս իրարու հանդէպ խիստ ըլլալու, դառն ըլլալու տրամադրութիւն մը ցոյց կուտան, կարծելով թէ, ինչպէս հին առած մը կ'ըսէ, «ակռան մինչև որ չի խածնէ, չի կրնար առողջ մնալ»:

Հայ գրողներուն մէջ զիրար խածնողներ շատ կան, բայց խածնելու առիթը յաճախ ծագում կ'առնէ ինքնիրմէն, եղբայրակցական զգացումին պակասութենէն, երբ մասնաւոր կարեւոր պատճառ մը չիկայ որ մէկը միւսին վրայ աղէկ չի խօսի կամ իր կարծիքը, իդ գաղափարը խղճմտօրէն և ազատօրէն չի յայտնէ: Մեր մէջ, գրական բարեկամութիւնը երբեք հասած չէ առաքինութիւն մը կոչուելու բախտին, անիկա եղած է միշտ մակերեսութեան և շատ խափուսիկ: Այո՛, հրապարակին վրայ կան մինչև իսկ «գրական աղբարիկ»ի, կամ «եղբայր ի

գրականութիւն»ի պէս նորաստեղծ բացատրութիւններ մը, բայց անոնց ո՛ր աստիճան անկեղծօրէն ըսուած ըլլալնուն վրայ մեծ կասկած ունիմ: Եւ ընդհակառակը, պիտի համարձակիմ ըսել թէ ոչ միայն մեր գրողները իրարու մտերիմ չեն, իրարու բարեկամ չեն, այլ հակառակօրդ ալ են, զիրար հալածող մրցակիցներ են յաճախ և զիրար անփափկանըկատօքէն, գռռելիօրէն յանդիմանող զրացիներ երբեմն: Խնդիրը հոն է սակայն որ այս կարգ մը լըրճուկութեանց երեսին բուն եղբայրակցութեան վարկը կորսուեր, գրական ճշմարիտ բարեկամութեան արմէքը ինկեր է և այսօր, մամուլը ուր իրեն գրական ժամադրաւայր պէտք էին երեւնալ անոնք միայն որ բարեկամ են իրարու, որ կը հասկնան զիրար՝ փոխուեր է նեղ փողոցի մը ուր ակամայ թող պիտի տաս որ սրճարանին անկիւնէն ելլող մէկը գայ իր աղտոտ թեւը քսէ քուկինիդ կամ գիշերնոցով յօգուած գրողը համարձակի հետդ խօսիլ լեզու մը դօր ո՛չ դպրոցին, ո՛չ ալ տանդ մէջ չես սովորած կամ լսած:

Դարձեալ, անգիտակցօրէն մշակուած և կեղծ հիմերու վրայ դրուած այս եղբայրակցութենէն է որ ծագում առած է մէկը մէկու վրայ անիմաստ վճիռներ արձակելու, կողմնակալ կարծիքներ արտայայտելու յոռի սովորութիւնը: Մեր գրողներուն աչքին, արդարեւ, կամ այսինչ գրագէտը պզտիկ աստուած մըն է կամ այնինչ հրապարակագիրը անպիտանին, տափակին մէկը: Միջին եզր մը չիկայ, ո՛չ ալ կշիռին նուազ ծանր կշռող կողմը կարեւորութիւն ունի իրենց համար: Եւ զարմանք, զի՞տէք որոնք են յաճախ մէյմէկ պզտիկ աստուածներ ենթադրած գրողները. անոնք որ աղմկայոյզ մուտք մը ըրած են գրականութեան սեմէն ներս, անոնք որ իրենց շուրջը զանազան առիթներով կըցած են կեղծ ուժելամներ ստեղծել և տիրանալ համբաւի մը որ շատ չի տարբերիլ հովիտ օդին աւաղին վրայ շառաչմամբ փչրուող ալիքէն: Ի՜նչ, ի՜նչ գրական համբաւներ զիտեմ ես տակաւին որոնք խլխլած և մէկ կողմին ծռած տունե-

րուն պէս, —ներեցէք բացատրութեանս, — բայանճաի պէտք ունին: Եղբայրակցութիւն ըսիք. հը՛, թղթատեցէք հրատարակուած մեր բոլոր թերթերուն հաւաքածոները և պիտի տեսնէք որ օրին մէկը իբր գրական աստուած հռչակուող գրողը վար նետուեր է, փողոցի ցեխին մէջ: Եւ մի մոռնաք որ զայն պզտիկ աստուած մը հռչակող և յետոյ անուանարկելու քմահաճոյքը ունեցող անձը՝ միեւնոյն գրողն է որ անհուն և անկեղծ բարեկամութիւն մը նուիրած էր անոր, այդ գրական աստուածին, հիմա չաստուածին: Մե՛ղք, այս բարեկամութիւնը ի՞նչու չի նմանցնել ջերմաչափին որ օդին փոփոխութեան համեմատ գոյն և դիրք կը փոխէ:

Գրական եղբայրակցութիւնը այսպէս գէշ արտայայտելու կերպէն է որ ծնած է նաեւ այն դիւրագրգռութիւնը, զայրացկոտութիւնը որ կայ մանաւանդ մեր նոր գրողներէն շատերուն քով: Ասոնք ճանճի մը մորթին դգայնութիւնը և փափկութիւնը ունենալ կը թուին, չես կրնար գրչիդ փետուրովը իսկ դպչիլ անոնց. անմիջապէս կը զգածուին, կ'այլալին և վրադ կը նետեն աղտոտ միջատի մը վայել իրենց մետրուքը:

Եւ սակայն չի մոռնանք որ գրականութեան մէջ ամէնէն աւելի նորերէն, երիտասարդներէն կըսպասուի եղբայրակցութիւնը, բարեկամութիւնը և մինչև իսկ սրտի և մտքի ազնուութիւնը: Իրենց հոգեկան վիճակը մէկ խօսքով—*l'état d'âme*—ամենէն աւելի կրնայ հետաքրքրել մեզ և իրենցմէ է դարձեալ որ կը պահանջուի իրարու հանդէպ անկեղծ ըլլալու, իրարու մասին առողջ կարծիքներ, լուրջ ու անկողմնակալ վճիռներ արձակելու բարեք յատկութիւնները: Ամենէն աւելի նորերը, երիտասարդները ճանչնալու են գրական հրապարակին վրայ իրարու բարեկամ մնալու, զիրար յարգելու առաւելութիւնները: Չե՛մ ըսեր թէ զիրար սիրեն անոնք, «նման զնմանն սիրէ» և այսօր զանազան խմորի և նկարագրի տէր գրողներ շատ կան զիրար չկրնալ սիրելու համար, բայց գրական բարեկամութիւնը, գրական յարգանքը ձեռքէ ձգելու չէ: Ասոնք

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ



Վսեմ. Հրգիի պէյի մահուամբ՝ տեղական մամուլոյ Տպագրական տեսուչի պաշտօնը բաց մնացած ըլլալով, Կայսերական բարեհաճ Իրատէի մը համաձայն՝ այդ պաշտօնին կոչուեցաւ Ներքին գործոց նախարարութեան գործողութեանց փութացման Յանձնաժողովին անդամ Վսեմ. Բէմալ Էֆէնտի:

Տպագրական Վսեմ. Տեսուչը երեքշաբթի Կայս. Պալատ երթալով, երախտագիտութիւն մատոյց և յետոյ իր պաշտօնատեղին դառնալով ընդունեց բազմաթիւ շնորհաւորութիւններ ու ձեռնարկեց իր պաշտօնին:

Մասիսի Խմբագրութիւնն ևս իր շնորհաւորութիւնները կը յայտնէ Վսեմ. Բէմալ Էֆ. ի, Տպագրական Տեսուչ անուանուելուն առթիւ:

* * Ազգ. Պատրիարքարանի գործակատար Արիս Էֆ. նախընթաց օր Բ. Դուռն երթալով, ի դիմաց Ս. Պատրիարք Հօր շնորհաւորեց Տպագրական Տեսուչ Վսեմ. Բէմալ Էֆ. ի պաշտօնը:

ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ ՆՈՐ ՅԱՐԿԱՐԱԺԻՆԸ

Խառն ժողովի չորեքշաբթի օրուան նիստին մէջ՝ Ս. Պատրիարքը հաղորդեց Ս. Փրկչեան Հոգաբարձութեան մէկ յայտագիրը որով արտօնութիւն խնդրած էր Հիւանդանոցի չէնքին երրորդ թեւը կառուցանելու և ներկայացուցած էր նաև չէնքին յատակագիծը որ ենթարկուելով ձեռնհաս սնձերու քննութեան՝ ընդունելի համարուած էր: Ժողովը հաւանեցաւ ներկայացուած առաջարկութեան և ընդունելով յատակագիրը, արտօնեց չէնքին կառուցումը, վստահութիւն յայտնելով որ, ինչպէս խոստացուած էր, այդ շինութեան պարտուց բեռ մը չպիտի թողուի, և որոշեց միանգամայն որ կարեւոր կարգադրութիւնները տեղի ունենան այնպիսի կերպով որ, Հիւանդանոցի այս նոր յարկաբաժնին մէջ վըճարող հիւանդներ կարելի ըլլայ ընդունիլ:

ԱՔԱՍԻԱՆԵՐՈՒ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ...



Ծաղիկներէն յուշիկ թերթեր կը թափէ
Բուրումներով օծուն հովիկն իրիկուան,
Հոգիներուն կ'իջնէ երազ մը բուրեան,
Ինչ հեշտին է մըթընշաղն այս սատափէ:

Աքասիաներ, գինով լոյսէ ու տապէ,
Օրօրուելով մաքուր շունչ մը կը հեւան,
Մինչ կը ձիւնէ ծաղիկն իրենց հոտեւան
Զոր խօլաբար հովը գրկել կը շտապէ:

Ու շուքն անոնց, անխօս հուրի՛ դիւթական,
Հըմայագեղ, ու վարսքերով արծաթէ
Շատրըւանին կ'իջնէ գուռին մէջ կաթէ:

Զուրը ցայտքէն ծաղիկ ծաղիկ կը կաթէ
Վճիտ՝ ինչպէս լոյսէ արցունքը մանկան,
Նուազն անոր կը հեծեծէ հեշտական:

Ծաղիկներէն հովը թերթեր կը թափէ...

Ս. Կ. ՄԵՄԱՏՈՒՐԵԱՆ

ԱՐԵՂԱԶԱԳՆ ՅԱՐՄԱՇ(*)

ԿՅԿՏՈՒՐ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ

Վանք մը կար. այդ վանքն՝ ինչպէս ուրիշ վանքեր, սարի մը վրայ կառուցուած էր: Եւ ինչպէս ուրիշ վանքեր ունին Ս. Աստուածածին որուն սիրուն ածականներ ալ կը տրուին՝ այն է Սիրահայեաց, Բարձրահայեաց, Խնդրակատար, այս վանքն ալ ունէր իր Չարխափան Ս. Աստուածածինը: Մարդ մը որ այդ վանքը կը մտնէր, էր քաջողջ, հաստակազմ, բանգէտ, լեզուանի և ալեոյթ հասակով:

Նա՛ այդ մարդը՝ տղեկներ այլեւայլ տեղերէ ժողոված ու հաւաքած՝ բերած ու տեղաւորած էր այդ վանքին մէջ: Կը սիրէր զանոնք, անհուն սիրով կը սիրէր և անոնց կոչումը կը պատրաստէր ի փառս Աստուծոյ:

Ո՞վ էր այդ մարդը.—անունը յայտնի չէ, վասն զի 140,000 տարի առաջ անուն դնելու սովորոյթը չկար: Բայց տրտում տըխուր էր ան. որքան որ կը սիրէր իրենները՝ սանիկները, այլ սակայն շատ տրտում տխուր էր, միշտ աչքը սեւեռած ըլլալով վանքի ուխտաւորներուն ճամբան, և դէպ ի երկինք նայելով՝ կ'ըսէր բազկատարած. «Աստուած իմ, արդեօք պիտի գա՞յ Անառակը»:

Ո՞վ էր միւսը, որ պիտի գար.—անուն չունէր, վասն զի 140,000 տարի առաջ անուն դնելու սովորոյթը չկար աշխարհիս մէջ, միայն թէ սա յայտնի էր թէ ան որ պիտի գար, թափառիկ մէկն եղած էր: Շատ

(*) «Արեղաձագ»ը երբեմն պարբերաբար կը հրատարակուէր: Ընդհատումէ մը յետոյ վերստին հրատարակուեցաւ Լոյսի 1901 հոկտ. 27ի թերթին մէջ: Այս անգամ Մա սիս ստանձնելով «Արեղաձագ»ի հրատարակութիւնը, Լոյսի ճոյն թերթէն կըսկսի շարունակութիւնը:—Նախորդ հրատարակութիւններուն մեծագոյն մասը գրքոյի վարածուած ըլլալով՝ կը ծախուի այժմ 10 դրուչի:

գաւառներու մէջ մտած ելած մէկն էր, և թէ և ուրիշներուն հոգեւոր պէտքերուն հասած էր, այլ իր տեսին տեսնան ոչ ոք եղած էր և ընդհակառակը միշտ իրեններէն հալածուած: Ի՞նչու.—վասն զի 140,000 տարի առաջ գիր չկար, և գիր չըլլալուն համար արձանագրութիւն չկար: Երբ սա վանքը կը մտնէր, ուրախ զուարթ կը մտնէր և կ'երգէր սա հին երգուկը.

«Ուռն է կանաչ այս այգոյս.

Որթն բացուեր է այս այգոյս.

Մեր ծաղկեր է այս այգոյս,

Այս իմ նորաչէն այգոյս:

Պալուէն կանչէ այգոյս,

Յօղն իջանէ ի յամպոյս

Յամէն առաւօտ և լոյս

Լուսաւորչի աչքի—լոյս»:

Մեծաւորն երբ տեսաւ զանի, որ վանքէն ներս կը մտնէր, անոր փաթթուեցաւ արցունքոտ աչերով և կը յեղեղէր սանիկներուն. «Ուրա՛խ լերուք, զի այս որդի իմ կորուսեալ էր և գտաւ, մեռեալ էր և եկեաց. բերէ՛ք զեզն պարարակ և զենէ՛ք»: Ի՛նչ մեծ ուրախութիւն մարդու մը որ հողի մը կը փրկէր:

Եւ երկուքը դէմ առ դէմ էին: Մեծաւորը ճարտասան էր, անդադար կը խօսէր, իսկ միւսը՝ խման էր և կ'երգէր: Որքա՛ն մեծ անջրպետ ընդ մէջ այս երկուքին:

Եւ էր գիշեր և երկուքն առանձին էին: Ուր ուրեմն Մեծաւորն ըսաւ միւսին. «Այս քանի՛ քանի՛ անգամ և գրեթէ քսան տարիէ ի վեր կը պատուիրեմ որ եկեմք հովին դէմ բանալու վարպետութիւնն ունենաս և յաջողութիւն գտնես, ինչպէս ես ունեցած եմ յաջողութիւններ, ելքէնս միշտ հովին դէմ պարզելով»:

—Ա՛հ, քանի քանի անգամ որ ելքէնս հովին դէմ՝ կը բանայի, ահա՛ արեւելքէն կամ արեւմուտքէն, հիւսիսէն կամ հարաւէն ծովի բուք մը կուգար կը ծակէր ելքէնս.

«Մախաթ չունէ՛ր, որ կարէ՛ր»:

—Բանի՛ քանի՛ անգամ որ կը կարէի, նորէն կը պատուէր, մինչև որ օր մը «վասն ծովացեալ մեղաց իմոց» մախաթս կոտորեցաւ:

«Էյ ինչ ըրիր» :

— Ինչ պիտի ընէի. ճարահատած, երբ կը լսէի թէ Էրզրում էք, հոն կը գրէի. և ահա կը լսէի թէ Վան էք գացեր, հոն կը գրէի. և ահա կը լսէի թէ հոն չէք: Օր մըն ալ լսեցի թէ Էջմիածին էք, և հոն չէք, տեղ մըն էք ու չէք, ա'լ ձանձրացայ, դիս ալ, նաւակս ալ, եէլքէնս ալ ծովը նետեցի և ահա հիմա զիս հոս գտայ :

Մեծաւոր խոր մտածումի մէջ էր, երբ հարցուց. «Իրա՞ւ, մախաթդ կոտորեցա՞ւ» :

— Այո՛ :

Ինչ կերպարան ու դէմք որ կըստանայ վնակ մը կամ դիւթ մը, երբ իր բըլբսը կորուսած կ'ըլլայ, ճիշդ նոյն դէմքը առած էր Մեծաւորը, որ իր կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով, յուսահատութեան մէջ կ'երեւէր, երբ ստուգեց թէ մախաթը իրաւ կոտորուած էր: Այլ յանկարծ ոտքի ելլելով՝ գոչեց. «Ո՛յ, հոս մնալու չես. այս անգամ ե'ս կը կարեմ նաւիդ եէլքէնը» :

— Կենդանի է Տէր և կենդանի է անձնքո՛ւ, եթէ թողից զքեզ :

Ընդմիջեց Մեծաւորն անոր խօսքը.

«Գիտեմ, կը վարանիս, զի կը մտածես թէ վերստին պիտի հալածուիս քուկիներէդ. բայց նաւիդ ընդհարողներուն տուր Աստուծոյ օրհնութիւնները: Գնա՛, ուրեմն» :

Ի վերջոյ միւսը մտախոհ մեկնեցաւ, տրտում տխուր ներս մտաւ սենեկէ մը՝ հոն նիւնելու համար: Եւ հազիւ թէ աչերը կը փակէր և ահա դրսէն՝

Թըք թըք :

— Ո՛վ է ան :

Բայց ո՞վ էր Մեծաւորը. — Մաղաքիս եպիսկոպոս Օրմանեան: Իսկ ո՞վ էր միւսը. —

ՎԱՅԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՅԻ

ՀԱԿԱԼՓՈԼԱԿԱՆ

ՊԱՅԳԱՐԻՆ ՇՈՒՐՋԸ

Մեր պարբերական մամուլն ալ, օրաթերթերուն պէս, համակիր ընդունելութիւն մը ըրաւ Յովհ. Էֆ. Թաւաճեանի կողմէ Մասիսի միջոցաւ բացուած հակալքողական յօդուածներու մրցման հրաւերին: Արեւ. Մամուլ, Բիւրակն, Հանրագիթակ, Ծաղիկ, Փունջ, իրենց վերջին թիւերով արտատպեցին այդ մրցման պայմանները, խմբագրական յօդուածներով շեշտելով անոր հանրագումարը: Նոյնպէս Աւետաբեր, իր Լուրերու բաժինին մէջ, ամփոփոյք մը հրատարակեց:

Իսկ նախընթաց շաբթուն, Մասիսը մամուլին յանձնելէ ետքը միայն տեսանք Մանդեկոն Օնիանդալի և Լեվրնդ Հերբիսի յիշատակութիւնները՝ այս հակալքողական պայքարին օգտակարութեան: Սոյն երկու անգլեֆրանսական թերթերէն առաջինը համառօտօրէն հաղորդած էր այս տեսակ մրցում մը բացուած ըլլալը՝ հայ թերթերուն մէջ. իսկ երկրորդը, Լ. Հերբիս, հրատարակած էր Ազր. Պոլսոյ իր թղթակցին մէկ նամակը որուն նիւթն էր Թաւաճեան—Մրցանակը, իբրեւ «Մարդասիրական նպատակի մը ձգտող անհատական նախաձեռնութիւն մը»: Այս առթիւ, մրցման պայմանները մանրամասնաբար ներկայացնելէ և Թաւաճեան Էֆ. ի Մասիսի ուղղած նամակէն ամբողջ հատուած մը թարգմանելէ ետքը, Լ. Հերբիս յօդուածագիրը կ'աւելցնէր իր կողմէ. — «Պ. Թաւաճեանի նախաձեռնութիւնը յոյժ գովելի է և «նպատակին հասնելու համար իր ընտրած «միջոցը սքանչելի: Իր առաջարկած մրցումը «պողարք և օգտակար պիտի ըլլայ մէկէ «աւելի տեսակէտներով: Հետեւապէս, Պ. «Թաւաճեան արժանի է ամէնէն անկեղծ «չնորհաւորութիւններու: Անկեղծօրէն խօսելով, ես պիտի ըսեմ թէ քիչ մը սկեպտիկ «պէտք է ըլլալ, երբ կը կարծուի թէ աւ««քումամուլութեան դէմ զրուածքի մը ընթեր««ցումը կը բաւէ զայն բժշկելու: Եւ սակայն

«մրցումին առթիւ գրուելիք յօդուածները
«պիտի կր՛ան ազգեցութիւն մը ունենալ
«ալքողամոլութեան վրայ, և անկէ հեռու
«պահել զանոնք որ տակաւին ալքով չեն
«գործածեր, ինչպէս նաև կրնան այս համա-
«ճարակէն զերծ պահել պատանիներն ու ե-
«րիտասարդութիւնը: Եւ արդէն, այս նպա-
«տակին հասնիլն ալ բաւական բան մըն է»:

Ս Ծ Ր Յ Ս

Երբեմնի ծովն հանդարտ անդորր,
Փոթորիկ մը կուգայ յուղել,
Կը պըրկուին ալքերը խոր,
Ալիք ծնին, փրփուր նոր նոր:

Ու փրփուրներ կանաչ ծովուն՝
Թռչուններուն նըման անոր՝
Կ'անհետանան երազ սիրուն՝
Տատանու մով, ուր մոլոր:

Սիրտս ալ երբեմն հանդարտ զերթ ծով,
Փրփուր չունէր, ո՛չ ալ ալիք,
Հուր աչքերու դէմ անվրդով
Անտարբեր էր ու երջանիկ:

Յոյզ մը սակայն եկաւ մէկ օր,
Թռիչ տալու սրտիս իմ փակ,
Թռչուններու նըման անոր,
Վար իյնալու թէև ատակ:

Ու շատ սէրեր իրար նըման,
Եկան գացին, մէկիկ մէկիկ,
Փրփուրներէն ալ ո՛չ նըշան
Սիրտըս ծովն է խուլ, անալիք:

Բայց չեմ գիտեր ինչո՞ւ կրկին
Կապոյտ աչքեր հով մը անդէն,
Կուտան կարօսն ինձ պատրանքին
— Պատրանք համակ կէ՛անքն իսկ արդէն:

ՊԱՐԷՏ

ԲԻՐԲԸՆԴ ՄՈՐԿԱՆ

Ամերիկացի միլիոնատէրները կրնան երկու
դասակարգի բաժնուիլ. — ինքօղնութեամբ
հարուստ եղողները, և ժառանգական հա-
րուստները:

Հաղուադիւտ զուգադիպութեամբ մը,
Մօրկան այս երկու դասակարգին միանգա-
մայն պատկանած է. որովհետև, ի ծնէ հա-
րուստ ընտանիքի զաւակ ըլլալով՝ կրնար դա-
տարկապորտութեան մէջ ընկողմանիլ, մինչ-
դեռ նախամեծար համարեց ինքզինքը աշ-
խատութեան նուիրել, օր մը աշխարհիս ա-
մենէն երեւելի գործի մարդն ըլլալու համար:

Բիրբընդ Մօրկան ծնած է 1837ին, հե-
տեւաբար վաթսուներութը տարեկան է այժմ,
քաջառողջ կազմով և առողջ:

Ամերիկայի և Գերմանիոյ մէջ համալսա-
բանական ուսումներն աւարտելէն ետքը
հօրենական դրամատունը մտաւ իբր ընկեր,
ուր քանի մը տարուան մէջ արտաքոյ կարգի
յաջողութիւն ունեցաւ:

1890ին, հօրը մահուամբը, Մօրկան միակ
ժառանգը և վարիչը մնաց այդ տնազին եւ-
մրտական մեքենային, որ քաղաքակիրթ
աշխարհի ամէն կողմը կը գործէ: Իր հայրը
լոնտոնէն կը կառավարէր զայն, ինքը Նիւ-
Եօրքէն կը կառավարէ: Արդէն շատեր չեն
գիտեր թէ որո՞նք են Մօրկանի գլխաւոր
գործողութիւններն ու ձեռնարկութիւնները:

Անիկայ պարզապէս պանքէր մըն է, որ
մեծկակ փոխառութիւններ կ'ընէ, աքսիոն
կը գնէ ու կը ծախէ, վարկադիրներ կը հանէ,
և այլն:

Մօրկան ո՛չ երկաթուղի չինած է ո՛չ ալ
հանքերու տէր եղած է, որչափ ալ որ
այս տեսակ գործերու ձեռնարկելու հե-
տաքրքրուած ըլլայ, ինքը բուն ելմադէտ
(financier) մըն է: Այսու հանդերձ, պէտք
չէ մոռնալ թէ, քառասուն տարիներու ան-
խոնջ աշխատութեամբ է որ Մօրկան իր ար-
դի բարձր դիրքին հասած է:

Աշխարհի ամէն կողմը մասնաճիւղեր ու-
նեցող իր մասնաւոր դրամատունէն դատ,
«Առեւտրական Պանքայ»ին քոնթրօլութեան

վերին պաշտօնը կը վարէ Մորկան, ինչպէս նաև ուրիշ հաղարարութիւններու գործերու մէջ մեծ աղբիւրներն ունի. ասոնցմէ զատ, քսանի չափ երկաթուղիի ընկերութեանց, աշխարհիս ամենամեծ երկրորդական ընկերութեան և շատ մը ապահովագրական ընկերութեանց Տնօրէնն է:

Միեւնոյն ատեն, Ուօլ Սթրիթ փողոցին անկիւնը հաստատուած իր գրասենեակին մէջ անձնականին ահագին գործ ունի Մորկան: Այս պատճառաւ, դեռ մինչև վերջին ատեններս իր գրասենեակը այնպիսի կերպով մը զետեղուած էր որ ամէն ոք կրնար իրեն հետ տեսնուիլ, առանց նախապէս այցեւորման ներկայացնելու. բայց վա՛յ անոր, որ առանց մասնաւոր առաջարկ մը կամ գործ մը ունենալու, իրեն կը մօտենար տաղտկացուցիչ դիմումներու համար, վասն զի Մորկան մի միայն դրական և քիչ խօսող անձերէ կ'ախորժի:

Քամակոյի երիտասարդ յանձնակատար մը, որ երբեք Մորկանի հետ տեսնուած չէր, օր մը անոր կը դիմէ յաճախորդի մը համար մէկ միլիոն տոլարի փոխառութիւն մը խնդրելու. հինգ բառով խնդիրը պարզելէ յետոյ, միասին բերած երաշխաւորութեան թուղթերը Մորկանի առջև կը դնէ: Մորկան ուշի ուշով զանոնք դիտելէ յետոյ, երեք խօսքով իր հաճութիւնը կը յայտնէ և պէտք եղած գործողութիւնը կատարելու համար յիշեալ երիտասարդը քովի սենեակը գտնուող պաշտօնէի մը կը զրկէ: Ու այսքան արագ կերպով և հակիրճ խօսակցութեամբ մը կը կատարուի մէկ միլիոնի փոխառութեան ահագին գործը:

Ֆինանսի Պիղմարքն է Մորկան:

Իր նպատակին հասնելու համար՝ ձեռքը ունեցած ամէն միջոցները ի գործ կը դնէ, այնպիսի ճարտարութիւն, խօհեմութիւն և հեռատեսութիւն մը գործածելով որ գրեթէ միշտ իր յաջողութիւնը ապահովուած է:

Իբր լաւ ելմտագէտ՝ շարժ մտնելը կ'աշարդէ, երբ խնդիրը երկու հակառակորդ ընկերութեանց մրցման վրայ է: Այդ տեսակ պարագաներու մէջ, Մորկան մրցակից ընկերութեան թուղթերուն տէր ըլլալու կը

ջանայ, զանոնք կը շահագործէ ու այս կերպով իր պատկանած վարչութիւնը շատ մը անօգուտ ծախսերէ կ'ազատէ:

Ընդհանրապէս սեղանաւորական հրապարակին վրայ պատահած մեծամեծ կորուստները վարկադրութիւն և անստուգութիւն առաջ բերելուն, Մորկան շատ անգամ ինքնաբերաբար օժանդակած է հրապարակին հաւասարակշռութիւնը պահպանելու համար. զօր օրինակ, 1899ին, Միացեալ Նահանգաց մէջ արծաթ դրամի պակսութեան պատճառաւ առաջ եկած տագնապին ատենը, աւելի մեծ տագնապի մը առաջքը առնելու համար, Մորկան չի վարանեցաւ միլիոններու տարափ մը տեղացնել հրապարակին վրայ:

Նոյնպէս Միացեալ Նահանգաց վարչութիւնը շատ անգամ դրամական տագնապներէ ազատած է: 1894ին, երբ պետութեան զանձը վտանգի մէջ դնելու աստիճան ոսկին Ամերիկայէն պակսելու վրայ էր, ահա՛ Մորկան ուրիշ դրամատէրներու գլուխը անցած երկու հարիւր միլիոն տոլար արժողութեամբ պետական թուղթեր գնեց, փոխարժէքը ոսկի վճարելով, որով տէրութիւնը մեծ կորուստէ մը ազատեց: Ասիկա մէկն էր սեղանաւորական այն հսկայ գործողութիւններէն զորս երբեք տեսած ըլլայ աշխարհ: Այդ պարագային էր որ Մորկան և ընկերները ահագին շահեր ըրին:

Հակառակ իր ունեցած բազմաթիւ հոգերուն ու ծանր աշխատութեանց, միշտ ժամանակ կը գտնէ ճարտարութեան հաւաքածոներով զբաղելու, և իր Նիւ Բորդի (Նիւ Եօրքի մօտ) մէջ ունեցած կալըքիները լեցուն են նկարներով, պղինձէ արձաններով, հին ոսկերչութեան վերաբերեալ առարկաներով, հաղուադիւս գիրքերով և ամէն աղգի ու թուականի հնութիւններով որոնք միլիոններ կ'արժեն:

Մորկան երկու զաւակ ունի. մէկը տասը տարեկան սիրուն աղջիկ մը՝ Ճիբսի, որուն հիմակուրէն աչք ունին Եւրոպիոյ քանի մը ինկած ուղեւորականները, և մանչ մը, 16 տարու պատանի մը, Արթիւր անուամբ, որ կատարեալ որսորդ մըն է:

Ինչպէս որ մտային երկարատեւ ու չափազանց աշխատութիւնները գաղափարներու յստակութիւնը կը խանգարեն, այսպէս ալ Մորկան ջղային դիֆերէ (tics nerveux) կը տառապի: Զոր օրինակ, կենդանագիրները մահու չափ կ'ատէ, այս պատճառաւ շատ դժուարին է իր մէկ լուսանկարը ձեռք անցընել:

Ասկէ քանի մը տարի առաջ, Նիւ Եօրքցի սիկառի մեծ վաճառական մը, Հալփանայի տեսակէն սիկառի մը ուէքլամ ընելու համար զայն «Մորկան» կոչեց, իբր թէ մեծ պանքէրին ամենահաճելի սիկառը եղած ըլլար, ասկէ զատ սիկառին ճիշտ մէջտեղն ալ Մորկանին պղտիկ մէկ կենդանագիրը զետեղեց:

Պատահամբ, օր մը Մորկան խանութին առջեւէն անցնելով զանոնք կը տեսնէ. սոստիկ նեղացած ներս կը մտնէ ու ծխավաճառը կանչելով կը հարցնէ թէ քանի՞ հատ «Մորկան սիկառ» կը գտնուի խանութին մէջ:

— 20,000 հատ, տէր իմ, կը պատասխանէ խանութպանը:

Ասոր վրայ Մորկան թղթապանակը հանելով չեֆ մը կը կտրէ, վրան քանի մը թուանշան կը գրէ ու ստորագրելով վաճառականին կը ներկայացնէ որ ապշահար մնացած էր: Յետոյ, բեռնակիր մը կանչելով բոլոր սիկառները մտուկներու մէջ զետեղել տալէ վերջ, 2 մէթր խորութեամբ փոսի մը մէջ թաղել կուտայ: Խանութէն հեռանալէ առաջ, յանդիմանութիւններ կ'ուղղէ ծխավաճառին որ ուրախութենէն ձեռքերը կը չփէր, միեւնոյն ատեն ներողութիւն խնդրելով և խօստանալով այնուհետեւ ուրիշի անունով սիկառ չի ծախել:

Ուրիշ ծխավաճառ մը, այս դէպքը իմանալով, նոյն խաղը կրկնեց մեծ շահու մը ակնկալութեամբ ու իր բոլոր սիկառներուն «Մորկան» անունը դրաւ. յետոյ, խնդրը մեծ դրամատէրին յայտնելու համար, այդ սիկառներով լեցուն տուփ մը ընծայ ղրկեց անոր: Բայց գործին ելքը իր յուսացածին բոլորովին հակառակը եղաւ: Մորկան այն աստիճան բարկացաւ որ խնդիրը դատարանի յանձնեց, և խեղճ ծխավաճառը 10,000 տոլար տուգանք վճարելու դատապարտուեցաւ:

Մորկան՝ առանձնութիւնը սիրող, լուռ բնաւորութեան տէր մարդ մըն է: Նիւ Եօրք գտնուած ժամանակը, Ուօլ Սթրիթի դրամատունէն կ'ելլէ ժամը 11ին միջոցները, — կէս օրէն առաջ, — բերանը խոշոր հալանա մը, ցորեկուան ճաշը ընելու համար: Երբեմն cab կոչուած կառքով կ'երթայ, բայց շատ անգամ հանրակառք նստիլը կը նախնտէ:

Պրէտվօ փողոցին անկիւնը, Ուօլս կամ Թայմզ կը գնէ զոր փոքր լրագրավաճառներ փողոցէ փողոց պոռալով կը ծախեն:

Մորկան իր ունեցած մտային ծանր աշխատութեանց հետեւանօք, տեսակ մը ջղային գրգռումներու և տկարութեանց ենթակայ է, որոնցմէ մի միայն իր «Լուութեան գիւղ» կոչած ամբարանոցին մէջ կատարեալ հանգիստ մը վայելելով կրնայ աղատիլ ու կազդուրուիլ:

Հոն, ամէն տեսակ աշխատութիւններէ ու հոգերէ զերծ, խաղաղ հանգիստ մը կը վայելէ իր գեղջկական միջաւոր տնակին մէջ:

Յ.—

ԳԵՂԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Սիրելիդ իմ Վահան

Ձմեռն անցեր է. արագիւն ու ծիծեռնակը աղուոր դարուն մը բերին: Մարտը, հակառակ իր խենթ հովերուն, չէնչող արեւով մը անցաւ: Ապրիլն ալ անաղմուկ ու շատ կանոնաւոր անձրեւներով սկսաւ: Այս երեւոյթը ինքնին նշան մըն է թէ՛ բարեբեր տարի մը պիտի դիմաւորենք:

«Թուղթ—հայող» մեր քահանայ հայրերն ալ տարբէր չէին վկայել արդէն. տարիին գիրը բարի է, ցորենի ու գինիի շատ առատ տարի մը կը ցուցնէ, միայն թէ՛ աւելցուցած էր ծանօթ շնորհունակներէն էն հեղինակ մասնագէտը, աշունին վերջերը կարել է քիթ բերան ծռող ծովափողներ մը ըլլան, ագահ որկորով խաղող և այլն շատ ուտելու հետեւանքներով: Օրբանին ծծկաններուն հետ զառամ ծերերն ալ պիտի կրնան, կը յուսացուի, զուարթ տարի մը բոլորելէ

Դաշտեցի երկրագործը վստահ ուրեմն այս քնական նպատակն էր երեւոյթներուն, չատոնց է արդէն որ դուրս եկած է ընտանիքի ամբողջութեամբը թոնիրի ու տախտի մը գլոտ անկիւններէն, և կազդուրուած ջիղերով իր սովորական ու սիրական աշխատութեան գլուխը կը գտնուի:

Անոնք որ ցանկ, չթիւ ունին տնկելիք, տնանկներ որ աղք պիտի կրեն հեռաւոր արտերու ծայրերը, այգի յօդող ու մշարա կուրատողները(*), առու բացող ու նոր պեղուած քնիւր ընողները, ամէնքն ալ իրենց գործերուն գացած են: Ծոյլ մը՝ քաղաքին մէջ, արգարանայ թերեւ, բայց ծոյլ գիւղացին վաղը հագար լեզու ալ թափէ, հա՛ ըսող չըլար իրեն:

Գեղին մէջ մեռելներուն անգամ չի ներուիր, որ անշարժ մեկուսացումով, հոն կակուղ հողը գրկեն ու ծոյլ քուն մը քնանան: Գեղացին աշխատութեան ընդունակ ժիր ձեռք ու ժիր ոտքեր ունի, ասոր ինք ալ համոզուեր է, ու գիտէ մանաւանդ թէ՛ այն ձեռքերը ատենին գործածողին համար քարը ոսկի՝ կը դառնայ ու ոտքերուն տակ ալ երաշտ անապատը՝ ծառով ծաղիկով կը չէննայ: Երէկ իրիկուն, մեր աւագերէցին քարոզն ալ այս տեսակ ճշմարտութիւն մը կը հաստատէր, որուն կարեւոր գիծերը դեռ միտքէս ալ չեմ հաներ. «Բարին Աստուած աշխարհքը ստեղծելու իր մեծ գործին մէջ, երբ վերջը վերջը մարդը կը ծրագրէր, անոր քունքերուն վրայ զոյգ մը ականջ, ու դէմքին ալ աչք, բերան մը յարմարցնելով, մէյ մը իր ձեռագործին պոյին պոսին նայեցաւ, լա՛ւ է ըսաւ, բայց... այդ բայցը անա ան ըսել կըլլայ եղբր որ մարդուն ականջին համար շատ անուշ, շատ ախորժ ձայներ կային լսելիք, աչքին համար սքանչելի պատկեր ու տեսարաններ պատրաստուեր էին. միայն բերանն էր որ ճարճարակ չունենալով անգործ ձգուած էր ու պարապը դարձող երկանաքարերու պէս ակունքները իրար զիրար կը կոտորէին. հայն էր, հայահառն էր մոռցուածը այդ բերանին համար. ստեղծողը անգամ մըն ալ աչք պտտցուց իր ձեռագործին

վրայ, քիչ մը ան իր մօտը քաշեց ու կուշտին թունդ խթուածք մը ընելով՝ գնա՛, ըսաւ, չուտ դէն գնա, ու ատ բերանին համար պէտք եղած հացն ալ դուն հարաւորէ, քանի որ քեզի ամէն բանի հետ այնքան ալ չէնք չնորհք ձեռք, ոտք տուի, այդ ձեռքը ամուր դաստակի մը կռթնցուցի, ոտքերն ալ նոյնքան ամուր ու հաստատուն ջիղերու մէջ ապահովցուցի, հետեւաբար ալ ոչինչ մի՛ սպասեր ինծմէ, գնա՛, դուն քեզի օգնէ, դուն քու քրտինքովդ Լրէ ցանածդ, մնացած պակասին համար ալ շատ վերջը ինծի դիմէ, ան ատեն ես չպիտի ուշանամ քեզի հասնելու, հրաւայելով ամպերուն որ արեւ անձրեւ խրկեն երկիրը, ձայն տալով երկրին որ մէկին տեղը տասը, մէկին փոխարէն հարիւր տալու հեշտ արդանդ մը բանայ, ու դեռ ապսպրեմ չորս հովերուն որ ի դէպ ժամու չնչելու բարերար աղղեցութեան մը մէջ երեւնան»:

Մեր փոքրիկ աղջիկներն ու տղաքը չնայելով որ դեռ քիչ մը սառ գետին պիտի գտնան իրենց մերկ ու մանրիկ ոտքերուն տակ, շաբաթ մըն է որ կոճղէզ ժողվելու կ'ելլան ու պարապ ալ չեն դառնար: Դէպի դաշտը՝ առաջին զնացքը պգտիկներուն կողմէ, կոճղէզին կամ հող-ինձորին հրապոյրովը կըսկսի, անկէ վերջ անոնք վայրի ծաղիկներուն հետամուտ՝ չամշուկին ու կակալին փնտռութեամբով պիտի ցատկտեն: Գեղի մանուկները՝ անանկները որ քիչ մըն ալ դպրոցի երես կը տեսնան, Զատիկէն սկսած մինչև աշունին վերջին շաբաթները լայն արձակուրդ մը կունենան: Բնապատմութեան ու աշխարհագրութեան դասերը կը սորվին ու ճշմարիտ է որ երջանիկ դըպրոցականներն են անոնք:

Երէկ, կէս օրին, տես թէ՛ քանի մը ծերուկներ կունակնին պատին տուած ի՛նչ դիտողութիւններ կ'ընէին նորեկ արագիւններու զոյգի մը վրայ: Եկեր են մարդիկը (արագիւնները) կարուշ, բայց հալ չունին գիտես քի՛—հէլպէթ, ճամբու եկեր են, խօլա՛յ է հերուան ձագտի՛քն են ասապ թէ՛ էնոնց

(*) Աւգոստոսները

մէրերը—ձագաթիքը պիտի ըլլին, միամիտ, մէր, պապ կը ծերանան, կը մեռնին կերթան:

— Ես օր գիտեմ նը էն չափ թէզ չեն մեռնիր, տէտէս կ'ըսէր քի ժամուն լէկլէկը հինգ—վեց տարի ապրեր է, թեկ կապեր է եղեր ճառընին,—է'հ, պէլքի, Թորոս, քի՛ մը իմ ալ խելքիս կը պառկի, միայն զարմանալի որ էսքան տարին շատ շատցեր են—շատցեր են, հրամեր ես, լէկլընին ըլ, պարխուշին ըլ շատ շատցեր են, գիշերը պարխուշ, ցորեկն ըլ լէկլէկ, երկու թռչուններն ըլ դաշտը կը սիրեն կ'ըսէր մեր օղորմած հոգին, մի՛տքէ է, տէրորանց տախտը կը պատմէր. էս գեղն ըլ արթըս էրթալով թևաւորները պիտի լեցնեն, ո՛ր բըշակ ու բաճա շուք կը ձգէ քովիկը, հէկպէթ, Զաքար, հէկպէթ:

— Վարամ, էս անգամ շատ հալ չունի էն մէկը, մէրին պիտի ըլլի գիտես քի, կտնուցը ուսերուն մէջ առեր՝ խորունկ մտմտուք կը ցուցնէ, ի՛նչ ունենայ, կ'ըսես, Պօղոս, խելք մըլ դուն թափէ—էկէր մէրին է տիւշիւմիշ եղողը՝ էրկանը ըխթիարութեան վրայ կը խորի. չէ, էկէր պապին (արուն) կը մըտմըտայ... բայց չիտակը պիտի ըսեմ, (ըսէ՛, ըսէ՛, կը պնդեն անդէին ուրիշները) պապին կը մտմտայ քի ես մեռնիմ նը կնիկս ո՛ր ձեռք պիտի մնայ, գիտե՛ս ա, Ակոբ, էմի՛, գէշ բան է, ախրը, ես շատ մը էրիկ մարդերու հոգի տալը տեսեր եմ, որ վերջին չունչով մը խորունկէն ախ վտիս մը կերկընցընեն. էտի գիտէ՛ք ինչ ըսել է, էտի ըսել է քի, ա՛խ, հոտուր, ես իմ կնկաս խայմախը չի կերած, դուն էնոր կարագը պիտի ուտես, շուն... շան... որդի՛ (Այս վերջինը խօսքն անոր կ'ուզէ, որը 60 տարեկանին մէջ կէնճ հարսնուկ մը առած ըլլալով՝ փողոցին հաւերն անգամ իրեն դէմ դատախազ կը պահէ): —Ո՛չ աս, ո՛չ ան, բան մըլ ինծմէ լսեցէք, (խօսքին յատակը միշտ արագիւնները) գիտէ՛ք ինչու կը մտմտան, մարդ ըսուածն ըլ, լէկլէկ ըսուածն ըլ մէկ բանի համար կը մտմտան. ես աղերսին կը պակսի, ես եղերնին, ճշմարիտ օր աս ասանկ է, լէկլէկները եկան տեսան օր աս տարի

գեղին ջրերը, ճախիճները ցամքեր են, բերուընին բան չպիտի դիպնայ, աս տարի իրենք ալ քիչուոր չեն երեւնար, ցուիքներն ու բաճաները բռնելէ յետոյ՝ հիմա սկսեր դոր տանիքին վրայ կը հաստատուին, ասչափ արագիւ ինչով ապրէին, ո՛ւր երթալին:

Ինչ որ ալ ըսեն, խօսին մեր սա ծերուկները, որոնք մըջիւններուն կացքին ու գընացքին վրայ ալ դիտեն գուշակներ ըլլալ, մեզի համար ան եղաւ ուրախառիթը որ արագիւին ու ծիծեռնիկին թեւերով աղուոր գալուն մը դիմաւորեցինք, ցորենի ու գինիի առատ տարի մը պիտի բոլրի, երնէկ անոր որ ուտելու խմելու նասիպ, խամէթ պիտի ունենայ, երնէ՛կ ան էրկան ան կնկան որ մէկ պակով մէկ բարձով ու մէկ օրով պիտի մեռնին ու սակայն վայը անոնց որ իրենց գերեզմանին վրայ սա Տէր Յակոբը պիտի մըթմըթայ:

ԹՎԱՍՏԻՆՅՈՒՆ

ԻՏԷԱԿԱՆԸ ՈՒ ԻՐԱԿԱՆԸ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻՆ ՄԷՋ

— ԿՈՒՄ —

Գեղարուեստի գոյութիւնը մարդկութեան չափ հին է, անոր հետ ինքն ալ զարգացած նըբացած և կատարելագործուած՝ հասած է այսօրուան վիճակին:

Հնագոյն դարերու պատկանող գեղարուեստական առարկաներ, գրական գործեր մեծամեծ ուսումնասիրութիւններու առիթ կը դառնան, և ճիշդ է այն անսուլթիւնը թէ գեղարուեստը ժողովուրդի մը ըմբռնումները ու անոր քաղաքակրթութեան աստիճանը ի յայտ կը բերեն:

Գեղարուեստը առաջին դարերու մէջ սահմանափակուած էր տաճարներու և պալատներու մէջ, բայց հետզհետէ կընդարձակուի, զանազան ճիւղեր կը ծնին և այսպէս այսօր ան մեր առջև կը պարզուի անսահման ընդարձակութեամբ:

Ինչ է գեղարուեստին նպատակը:

Կարծիքները կը տարբերին: Թէն կ'ըսէ

իր Philosophie de l'art-ին մէջ—«Ամէն արուեստագիտական գործ նպատակ ունի արտայայտելու էական նկարագիր մը՝ աւելի յստակ կերպով քան իրական առարկան»:

Արուեստի ճշգրիտ սահմանն է այս:

Գեղարուեստի զանազան ճիւղերը միակ գաղափարական մը ունին տարբեր ձևերու տակ, այն է կրթել մարդը: Անոնք կը խօսին հոգիին, սրտին և դժայարանքներուն հաւասարապէս, և ընդհանրապէս կրթիչ դեր մը կը կատարեն: Ինչ բան ուրեմն կը մղէ աղբերը մշակելու գեղարուեստը. միակ պատասխանը դոր կարելի է տալ սա է. գեղեցկին վայելումով չի գոհանար մարդ, կ'ոգէ զայն արտադրել և ասիկայ գեղարուեստի յառաջդիմութեան ամենամեծ պատճառներէն մէկն է. երբ մարդ յաջողի գեղեցիկը արտադրելու, ատով չի գոհանար, կը փարի ուրիշ գաղափարական գեղեցկութեան մը: Բացի նկարչութենէն և քանդակագործութենէն, գեղարուեստը մեծ փոփոխութեան մը չենթարկուիր. դարերու անցումովը միայն ձև կը փոխէ:

Գրողին խառնուածքը, ցեղը, միջավայրը, շրջանը ազդած են գործին վրայ և ասով միայն կը տարբերին իրարմէ. բայց գեղարուեստի ճիւղերէն նկարչութիւնը և քանդակագործութիւնը մարդկութեան յառաջացումովը idéal ու ձև միանգամայն կը փոխեն:

Հէկէլ՝ գեղարուեստի երեք շրջաններ կընծայէ: Խորհրդանշանական արուեստի շրջան, (art symbolique) որուն զարգացումը արեւելքի մէջ կը գնէ: Յունական արուեստի շրջան (art grec) որ առաջին անգամ մարդկային գեղեցկութիւնը կըստեղծէ: Յունական արուեստին կը յաջորդէ քրիստոնէական արուեստի շրջանը և Քրիստոնէութեան հետ մարդուն իտէալն ալ կը փոխուի: Նոր ժամանակներու արուեստը չունի որոշ ուղղութիւն մը, քանի որ գոյութիւն ունեցող ամէն բան ներկայացուելու արժանի նիւթ մը կը դառնայ արուեստագէտին ձեռքին տակ:

Այս համառօտ ակնարկէն յետոյ բուն

խնդիրը քննենք, — իտէականին ու իրականին բաժինները գեղարուեստին մէջ: Հոս երկու ներհակ կարծիքներ իրարարու կը հանդիպին, իրապաշտութիւն և գաղափարականութիւն: Այս երկու ուղղութիւններն ալ հաւասարապէս ունին իրենց ջատագոյնները:

Իրապաշտները բնութեան ճշգրիտ ընդօրինակութիւնը կ'առաջարկեն սա առարկութեամբ թէ գեղարուեստին նպատակն է ընդօրինակել, արուեստները մշակելը՝ նմանցընել է կըսեն, բնութիւնը բխրաւոր օրինակներ կ'ընծայէ. էականը ընտրելն է: Թէ ճիշդ է այս տեսութիւնը, քիչ յետոյ պիտի պարզենք: Գաղափարապաշտները կը պահանջեն որ գեղարուեստը միայն իտէաներ բացատրէ, բայց հոս բացայայտ նկատելի կէտ մը կերեւայ. առանց ձևի կամ չափազանց անկատար ձեւով մը իտէալը բացատրել՝ գրեթէ անկարելի է:

Գաղափարը առանց ձևի ինչպէս կարելի է ներկայացնել: Ինչո՞ւ բնութեան ճշգրիտ ընդօրինակութիւնը անկարելի է. այս խնդիրը շատ անգամներ յուշուած է գեղարուեստական աշխարհին մէջ, և տակաւին ալ շատերէն գէշ հասկցուած: Գեղեցկին ընդօրինակութիւնը կրնայ և պարտի ըլլալ ըստրուկ նմանողութիւն մը իրականութեան: Կը բաւէ լաւ կռել հարցման եզրերը, ճշգրիտ լուծում մը գտնելու համար: Կրնայ որ և է արուեստագէտ կատարելապէս ընդօրինակել բնութիւնը, ոչ, հոս է որ կոչնչանան իրապաշտներու տեսութիւնները, որովհետեւ որչափ ալ որ յաջողի ընդօրինակութիւն մը, դարձեալ բան մը կը պակսի անկէ, կեանքը որ միայն բնութեան յատուկ է: Ուրեմն պէտք է նմանութենէն դուրս փնտռել արուեստին նպատակը:

Եթէ մարդ չի կրնար ընդօրինակել իրականութիւնը կատարելապէս և անոր տալ կեանքի երեւոյթը, սակայն ինք ունի յատկութիւն մը որով կրնայ հասկնալ զայն և անկէ դուրս հանել գաղափարը՝ իրականութեամբ արտայայտուած. յետոյ կրնայ այդ գաղափարը ալ աւելի զգայուն դարձնել, արուեստի շրջանին մէջ փոխադրելով: Ուրեմն իտէա-

կանի ու իրականի միութիւնը կրնան առաջ բերել գեղարուեստական որ և է գործ :

Այս երկու դրութիւններուն խառնուրդը, բանաւոր միացումը նախընտրելի է եւ ճշմարիտ գեղեցիկը ասոնց միացումէն կրնայ ծնիլ :

Իրականը կարեւոր պայմանն է գեղեցիկին : Իտէականը նպատակը եւ միջոցը :

Ամէնէն մեծ արուեստագէտները այսպէս ըմբռնած են արուեստը, խորաթափանց աչքով ընդօրինակած են բնութիւնը՝ բայց երբեք չեն փորձած ընդօրինակել զայն ճշդութեամբ, իտէականը խառնած են իրականին որոնց միացումովը կարտայայտուի բուն գեղեցիկը այնքան գերազանցօրէն :

Տ. Կ. Զ.

ԶԲՕՍԱՇՐՋԻԿՆԵՐԸ



Տարուան ամէն եղանակներուն մէջ, բայց մանաւանդ գարնան, Պոլիսաւ կ'ընդունի այցելութիւնը տարաշխարհիկ թուոխքներու որոնք կուգան վայելել Վոսփորի աննման գեղեցկութիւնները և տեսնել Օսմանեան ոստանին պատմական ու հետաքրքրական վայրերն ու շէնքերը : Այս տեսակէտով, չահեկանութենէ զուրկ չէ հետեւեալ գեղեցիկ ուսումնասիրութիւնը զոր բարիգեան Revue Հանդէսին մէջ հրատարակած է Պ. Մօրսիէ, զբօսաշրջիկներու վրայ :

Ահա կարեւոր իրողութիւն մը. քսան ասորիէ ի վեր՝ վեցերորդ զգայարանք մը ունենալու վրայ ենք, այն է զբօսաշրջիկութիւնը : Բոսաներորդ դարուն սկիզբը՝ զուարճութիւն մը, գրեթէ պէտք մը դարձած է զբօսաշրջիկութիւնը :

Ակներեւ է թէ, մէկ օրէն միւսը չէ ծնած այդ զգայարանքը : Բնութիւնը ատանկ աւնակնակներ չըներ : Զբօսաշրջիկութիւնը ճամբորդութիւն կը նշանակէ, ու մարդ ամէնէն աւելի բնանկարներու (paysage) կը հանդիպի ճամբորդութեան մէջ, մարդիկ ու շէնքեր տեսնելով հանդերձ : Ուստի հարկ էր

որ բնութեան գեղեցկութիւններուն զգացումը ամէնէն առաջ արթննար և ընդհանրանար միտքերու մէջ : Արդ՝ Փրանսայի մէջ հարիւր տարիէ ի վեր գոյութիւն ունի այդ զգացումը : Մեր դրացիներուն՝ անգլիւսաքսոններուն հոգին, նուազ ազդուած ու ընտելացած դասական զարգացումով, միշտ կապուած է իր հողին և զինքը չըջապատող միջոցներին, հազարումէկ յօդերու միջոցաւ : Ուղղակի յարաբերութեան մէջ գտնուած է արտաքին բնութեան հետ : Փրանսացիները աւելի քաղաքակիրթ ու քաղքենի կեանքին վարժուած են : Վայրի բնութեան այդ զգացումը բոլորովին անձանօթ բան մը հիներուն, ինչպէս կը պատմէ Լաֆոնթէն՝ նամակով մը, Ժան-Ժաք-Ռուսոյի կողմէ տարածուեցաւ արտասահմանի մէջ : Այնուհետեւ, ահագին յաջողութիւն ունեցաւ Փրանսայի մէջ. հոգւոյն ստեղնաշարին վրայ խորազգեցիկ արտայայտութիւն մը առաջ բերին Շաթոպրիանի մը, Լամարթինի մը և Վիկթոր Հիւկոյի մը քնարին հիսաքանչ պատկերները, մինչև մեր օրերը՝ Լօթիի սառսուուն նօթերը : Բնութեան այդ զգացումը արթննալէ ու դարձանալէ յետոյ՝ պէտք էր պահպանել զայն : Ժամանակակից զգայականութիւնը, նոր զգայութիւններ ունենալու պէտքէն մղուած՝ խորհած է այդ զգացումը անուցանել նոր ու յարափոփոխ տեսարաններու միջոցաւ : Սակէ ծնաւ ճամբորդութեան սէրը, զբօսաշրջիկութեան տենդը :

Բայց բնութեան զգայման այդ զարթուումին հետ պէտք է գոյութիւն ունենար նաեւ ֆիզիքական ու տնտեսական պայման մը, տեղափոխութեան նոր միջոց մը՝ բնութեան այլազան տեսարանները վայելելու համար : Նախ շոգին գործեց այդ հրաշքը, Ժ. Դարուն սկիզբը, թէ՛ ցամաքի և թէ՛ ծովու վրայ : Յետոյ եկաւ փոքր հրաշքը. արագութիւնը բազմապատկող փոխադրութեանց միջոցներու չղթան՝ իրարու կապուած, սկսեալ վէլոսիբէդէն մինչև պիսիքլէթ, թրթուրէն դուրս ելլող թեւաւոր թիթեռնիկի մը պէս, որ Հէրմէսի (սիրոյ զիցուհի) թեւերը կը դնէ զբօսաշրջիկին դարչապարին տակ : Վերջապէս

պէս երեւան եկաւ մօթօրը և անոր հետ մէկտեղ՝ ինքնաշարժ կառքը։ Այսպէս ծնաւ ժամանակակից զբօսաշրջիկը, որ կրնար ուղածին պէս տարագ և հանդիստ տեղափոխուիլ ալ ևս, բնութիւնը վայելելու համար։

Լիթթիներու յօրինած բառարաններուն մէջ տրուած հետեւեալ սահմանը անբաւական դարձած է ալ ևս. «Զբօսաշրջիկ, անձ մը որ կը ճամբորդէ անգործ ըլլալուն համար»։ Ասիկա ճշմարիտ էր մեր մեծ մայրերուն օրով, երբ ճամբորդ-զբօսաշրջիկները տեղացիներու կողմէ կը համարուէին «անգլիացի», իսկ պանդոկատէրներու կողմէ՝ «միւլորտ» մը։

Թէօֆիլ Կոթիէ զանոնք կ'անուանէր ճանճրացած բանաստեղծներ և զբօսաշրջիկ միւլորտներ։ Այսօր անգործութեան համար չէ որ կը ճամբորդեն։ Ընդհակառակը, ամբողջ շաբաթը կրկին աշխատութիւն կը կատարեն՝ լաւ կիրակի մը անցընելու համար բացօթեայ, դաշտերուն մէջ կամ ծովուն վրայ։ Միմիայն հետաքրքրութեան համար ալ չեն ճամբորդեր, այլեւ ճամբորդութեան եւ բացօթեայ տեղափոխութեան հաճոյքը ունենալու, յարափոփոխ երկնքին ու նոր հորիզոններու վայելքը ըմբոյլանելու համար։ Վերջապէս հիմա ամէն մարդ գիտէ ճամբորդել։ Անցած են այն ատենները, երբ զբօսաշրջիկներու զանազան դասակարգեր միայն գոյութիւն ունէին, իրաւ է թէ քիչ մը ծիծաղաշարժ։ Թէն յիսուն տարի առաջ գըրած է հատոր մը, Ճամբորդութիւն Պիեթե. Կանց մեք անուն։ Այդ հատորին մէջ ֆրանսացի ծանօթ քննադատը երեք դասակարգի բաժնած է զբօսաշրջիկները։ Առաջին դասակարգը կը կազմեն անոնք որ կը ճանչցուին «իրենց դայալիկէն, փետուրներէն ու դնացքէն»։ Նիհար ու բարձրասրուն թռչուններուն նման։ Երկրորդ դասակարգը աւելի թանձրամարմին է ու յաճախ ոսկի ակնոցներ կը կրէ։ Երրորդ դասակարգը, ոչխարամիտ, գաւառէ գաւառ կը պտտի՝ սովորոյթներու եւ մայրաքաղաքի կերակուրներուն ի խնդիր։ Սակայն այսօր զբօսաշրջիկի տիպարը նոյնացած է Բալէկին, Վիսկին և

կարճ տաքատին տակ, որ ամէնուն ալ նմանազգեստը եղած է, պահելով հանդերձ հոգեկան տարբերութիւնները։ Այսպէս երեւան եկած է աշխարհաքաղաքացի զբօսաշրջիկը՝ երկրագունտին ամէն ճամբաներուն վրայ։ Այսօր զբօսաշրջիկը այն մարդն է որ ամէն կողմ կը շրջի՝ վայելելու համար բնութեան տեսարանները եւ տիեզերական արուեստը։ Ամէն այր եւ ամէն կին գոնէ կիրակի օրերը երբ լաւ օդ կ'ընէ, պտոյտի կ'ելլէ, հետեւաբար ամէն մարդու մէջ զբօսաշրջիկի խմոր մը կայ այսօր։

Իսկ մեծ զբօսաշրջիկութիւնը կը ձեւացնեն ճամբորդութիւնները։ Հէրոտոթէն եւ Մարքո-Բոլոյէն սկսեալ մինչև Սթանլի. ուրուն մեռնիլը շատ չընէր, զբօսաշրջիկութեան հերոսները եղած են մեծ ճամբորդները։ Աշխարհ չէ տեսած աւելի մեծ ճամբորդներ՝ բաղդատամբ անոնց որոնք մեր օրերուն մէջ հետադատած են Ափրիկէի խաւարակուռն մասերը եւ Բելեռներու սառուցիկ ու ձիւնաթոյր ճամբաներուն վրայ թափառած են։ Անձանօթին տենչանքը ունեցող մարդիկ ալ եւս չեն կրնար կանգ առնել, ու օտար երկիրներ տեսնելու կարօտախտէն հրաժարիլ։ Այսպէս, վերջերս անգլիացի միլիոնատէր ու մանկամարդ կին մը կրկին անգամ կ'ուղեւորէր Ափրիկէի ներսերը՝ հոն յօշոտուելու համար։ Իսկ Շարքոն որ կը դառնայ անկէ։ Անոնք մեծ ռահվրաններ են, որոնք դէպի անձանօթը դիմողներուն գլուխը կը գտնուին։ Միշտ գոյութիւն պիտի ունենան յանդուգն, արկածախնդիր երկրախոյզներ, որոնք Բոլոմպոսի պէս առաջ պիտի նետուին՝ նոր աշխարհ մը գտնելու համար։

Ընդհակառակը, այսօր զբօսաշրջիկութիւնը ընդհանրական, տիեզերական, ռամկական հանգամանք մը ստացած է. ասիկա նոր ու կարեւոր իրողութիւն մըն է ինքնին։ Դէպի զբօսաշրջիկութիւն եղած այս շարժումը այնքան ընդհանուր ու զօրաւոր դարձած է որ բնական շարժում մը ուժը ստացած՝ ֆիզիքական պէտքի մը կը համապատասխանէ։ Արդարեւ պէտքն է որ կը մղէ այդ բանին, որով օրէ օր կը շատնայ զբօսաշրջիկներուն

թիւը, բնութեան գիրկը դիմողները աւելի բազմաթիւ կը դառնան: Անջրպէտ ու օդ կը փնտռեն ատոնք, որովհետեւ այդ երկու բաներէն ալ շրկուած են քաղաքներու մէջ: Արդէ քաղաքակրթութիւնը քաղաքներու մէջ կը դիզէ եւ կը պահէ ձեռքի ու մտքի աշխատաւորները, իրարու վրայ խճողուած ու գերազրգուած: Մարդիկ որքան չարաչար աշխատին ու անձուկ տեղերու մէջ ապրին, այնքան պէտք կը զգան կիրակի կամ արձակուրդի օրերը դուրս ելլելու զիրենք սեղմող յըջանակէն, դաշտերն ու ծովեզրերը պտտելու, և տեղ տեսնելու: Անհրաժեշտ դարձած հանգիստ մը, հակադէմքութիւն մըն է ասիկա ընդդէմ քաղաքակիրթ կեանքին յոգնութեանց, որ կ'ապականէ ներ կեանքը:

(Շարունակելի)

Թարգմ. Զ. Ն

ԽՄԱՐԱԳՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ

Նպաստեց Յաննաթողովոյ անդամ Սիմոն էֆ. Գայսէրեան և Նդուարդ էֆ. Գարալէօզեան Պէպէքի որբանոցը երթալով, այդ Հաստատութեան փակուելուն առթիւ պահանջած են որ, այն հայ աղջիկները, որոնք ծնողք կամ տէր չունին, Պատրիարքարանի յանձնունին՝ իրենց տեղերը շրկուելու համար: Որբանոցին արդէ վարիչ Պ. Բողլէր՝ թէպէտ պահ մը առարկութիւններ ըրեր է, սակայն ի վերջոյ հաւանութիւն տուեր է:

Նիւ Նորիքն Յովհ. էֆ. Թավչանճեան որ Գալֆեան որբանոցին կահաւորման համար ասկէ առաջ 50 ոսկի նուիրած էր, թերթերէն իմանալով որ այդ գումարը չէ բաւած՝ նոյն նպատակով 6 անգլ. ոսկի ևս ղրկած է: Խնամակալութիւնը շնորհակալութեան գիր մը ուղղած է Թավչանճեան էֆ. ի:

Ս. Պատրիարքը Խառն Ժողովոյ որոշման վրայ՝ գրած է Գարալէօզեան կտակի Գործադիր Յանձնաժողովին թէ՛ կտակին վերաբերեալ գործողութեան աւարտելուն առթիւ ի նշան երախտագիտութեան հանգուցեալ Գարալէօզեան էֆ. ի հոգւոյն ամէն տարի ու

րոշուած է Հոգեհանգստեան պաշտօն և պատարագ մատուցանել և յանձնարարած է որ այս մասին հարկ եղած կարգադրութիւնները սահմանուին:

Ուսումն. Խորհուրդի Ատենապետ Տոքթ. Տիգրան պէյ Աճէմեան շաբթուս այցելելով Եէնի Գաբուի Ս. Առաքելոց և Հայկանոյշեան երկսեռ վարժարանները, մանրակրկիտ քննութենէ մը անցուց երկսեռ աշակերտները և գոհ մնաց:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԼԻԱՌԱՏԵՐՆԵՐՈՒ

«ՄԻՏՔԻ ԿԱԹՈՒԼՆԵՐ»Ը

ԲԱՌՆԷԿԻ

Յաջողութեան դաշտնիքը կը կայանայ՝ յաջողիլ ուղեւոր հաստատ որոշման մէջ և կեանքի պայքարին ատեն ենթարկուած ամէն մէկ անյաջողութիւն՝ իր ջիղերուն աւելի ամրացման առիթ համարելու անյողդդդ մտադրութեան մէջ: — Կեանքի պայքարին ատեն, առաջին կարգին վրայ գտնուող երիտասարդներուն խրատ կուտամ, որ իրենց վաստկած հինգ տօլարին մէկը շահու դնեն: Եթէ երիտասարդ մը գործի սկսած ատենէն սկսի այսպէս ընել, եթէ ընդունակ է՝ հաւուստ պիտի ըլլայ: — Իմ սկզբունքս է, կեանքի մէջ յաջողելու համար, նախ պարկեշտութիւն՝ այսինքն պատուոյ նախանձախնդրութիւն. յետոյ՝ փութաշանութիւն, և երրորդ՝ աշխատութեան և ջանքի կեդրոնացում:

ՍԷՅՏ

Դրեթէ ամէն մարդ կրնայ տօլար մը վաստկիլ, բայց խելացի մարդը միայն դիտէ թէ ինչպէ՛ս կարելի է տօլար մը խնայել: — Նոր գործի սկսող երիտասարդներուն տալիք միակ խրատս է, յարատեւ ըլլալ իրենց գործին մէջ. այս է յաջողութեան բանալին: Բայց այս ալ օգուտ չունենար, եթէ խնայախորութեան չի վարժուի մարդ:

ԲՆԻՈՊԸՐԻ

Հարստանալ ուղող երիտասարդին խորհուրդ կուտամ իր ամսաթղտակին մէկ—քանի պատիկին արժանանալու ջանալ. և ասոր համար ալ, պէտք է իրեն յանձնարարուածէն, իրմէ պահանջուածէն աւելին ընել: Երիտասարդ մը որ բնականէն կարող ըլլալով՝ ծանր աշխատութիւններ ալ կատարէ, անկարելի է որ չի գնահատուի իր պետերէն:

ՊԵՆՏԵՏԻՒ ՄԷՅՐԸԼ

Ամէն առնելիք քայլերդ մտածելով ա՛ռ. ասով թէպէտ այնչափ արագ չես ընթանար, բայց ամէն պարագայի մէջ ասպանով կ'ընթանաս:

Բ. Բ. ՅԵՐՈՒԷՐ

Դրամի սիրոյն գէշ բան մը մի՛ ըներ. հարուստ ըլլալու համար՝ միշտ ժուժկալ, պարկեշտ, փութաջան և խնայող ըլլալէ, քու պետիդ և քու անձիդ հանդէպ հաւատարիմ ըլլալէ, առանց ագահանալու՝ կարելի եղածին չափ խնայասէր ըլլալէ և խնայուածներն ալ խելացիութեամբ շահաբեր ընելէ զատ ուրիշ լաւագոյն միջոց չեմ ճանչնար: Փոքր խնայողութիւններով հարուստ ըլլալու լաւագոյն միջոցն ալ լաւ կալուած ծախու առնելն է:

ՈՒՒԼԻԲՄ ՎԱԼՏՈՐԵ ԱՍԴՈՐ

Ոգելից ըմպելիքէն հեռու մնալու է: Մարդ դրամ չի կրնար վաստկիլ եթէ իր ուղեղը պայծառ չըլլայ. և այս ալ կ'ըլլայ եթէ ալքով չապականէ դայն: Պարտք ընելէ վախնալու է մարդ. պարտքն է որ կը կործանէ մարդս: Մարդ անգամ մը պարտքի տակ մնալէ ետք, այլ ևս իր արժանապատուութեան յարգն ալ չի գիտնար, կըստորնանայ և գձուծ միջոցներու կը դիմէ: Մարդ խնայող ըլլալու է իր դրամին՝ այնչափ որչափ որ կրնայ. ասպանովագոյն և անասան դիրքն ալ կալուածատիրութիւնն է: Կալուածը դիչեր ցերեկ կ'աշխատի իր տիրոջ համար, տաքին պաղին չի նայիր:

Մարդ դրամ չահելու համար իր գործունէութեան գլխաւոր նպատակը միակ բանի

մը վրայ կեդրոնացնելու է, և առ այդ յաւատեւելու է մինչև որ յաջողի հասնիլ անոր և կամ մինչև որ հաստատ կերպով համոզուի թէ այդ նպատակին համար տուած աշխատութիւնն անյաջող պիտի ըլլայ: Անպատիւ միջոցով վաստկուած դրամէն աւելի դժուարին բան չկայ. ուստի մարդ պահելու է իր անձին արժանապատուութիւնը:

Հարստութեան ճամբան՝ վաստկուածէն քիչ ծախսելուն մէջ է:

ՀԷՆՐԻ ԲԼԷՎ

Կեանքի պայքարը նոր սկսող երիտասարդ մը՝ պաշտօն մը ընտրելու է իրեն համար, այնպիսի գործ մը որուն համար մասնաւոր նախասիրութիւն մը կըզգայ իր մէջ: Շատեր իրենց բովանդակ կեանքին մէջ չարաչար կ'աշխատին առանց յաջողելու, վասն զի անոնց ծնողքը կամ ազգականները ժամանակին այնպիսի գործ մը ընտրեցին որ անոնց անյարմար է, զոր չեն սիրած, մինչդեռ եթէ իրենց նախասիրած գործով զբաղէին, առաջնակարգ արուեստագէտ մը կամ արհեստաւոր մը պիտի ըլլային:

ԹՈՒՓԱՆՏԻ ՎՐԱՅ

ԿԵՆՍԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրեց ՏՈՒՐԹ. ՅՈՒՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ժողովուրդին հասկնալի լեզուով մը՝ բացատրուած է ա՛յնքան տարածուած և վտանգաւոր այս հիւանդութեան բնութիւնը: Յըստակօրէն ցուցուած են վարակումէ զերծ մնալու պարզ կերպերն ու դարմանումի ամենէն բանաւոր եղանակները: Ամէն մարդու և ամէն տան անհրաժեշտ պէտքը:

Դինը՝ միայն 60 փարա:

Դիմել Պալենց Գրատուն, Կ. Պոլիս, կամ Հեղինակին՝ Պարտիզակ:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Տէր ԷՆ ՏՃՕՐԿԵ—ՏՈՒՐԹ. ԵՒՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐՇԵՆԼԻՔ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ. ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆՍԱՑ ԱՊՍՆՈՎԳ. ԸՆԿ.

Հիմնադրվել է 1875 թ. հունիսի 1-ին
 Կը գործէ ուղղակի ճիշտ. կառա-
 վարութեան հսկողութեան ներքին
 Ընթացիկ ապահովութեամբ. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.
 Իրամագրուիս եւ պահեստի 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.
 Ընդ. գործակալ Պալսոյ եւ գաւառաց
 ԱՐԱՄ Ս. ԳԱԼՏԱՆԱՆ
 Պոլիս, Հանօրութիւն խան Նո. 53
 Գաւառները պատուաւոր գործակալներ կը
 լինուին: 12—50

ՆԱԶԱՐԻԹ. ԻՍԶԻՐԵԱՆ

Փ. Ս. ՍՏԱՌԱՆ

Պոլիս, Մարբուհնայար, Պարմարան խան
 Թիւ 26

Այժն կարգի դատեր կը ստանան եւ
 խնդրոյ առարկայ եղած գործերու համար
 թէ՛ բերանադի եւ թէ՛ թղթակցութեամբ
 բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք
 կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ
 դատերու եւ առեւտրական ու արտադրան
 պայմանագրութեանց վկայագրերը թուրքեր,
 Ուրբաթ օրերը եւս մինչեւ կէս օր ձեռնա-
 բար խօսակցութիւն կը կատարէ եւ կար-
 ծիք կը յայտնէ:

Օգտ. անօնիմ քննիչութեանց քննչանուոր
 ժողովոց մէջ բաժնետէրերը առանց վարձի
 կը ներծառուին:

Ապահովագրական գործառնութիւններու
 եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական
 քննիչութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող
 տեղեկութիւնները ձեռքարար կուտայ, եւ կը
 յայտնաբերէ որ մինչեւ որ այս մասին կա-
 րուար եղած տեղեկութիւնները իրմէ չստաց-
 ուին, ապահովագրութիւն չի ստորագրուի:
 Ապահովագրական վէճաւոց հաշուարկման գու-
 մարներու եւ փոխարժէքներու գտնաւոր
 եւս կը ստանան:

Իսկ վարձքի մասին տեղեկութիւն եւս
 տանութիւն կ'ընծայէ: 1—40

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԸՆԴՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200

Կալաիա-Մէրայի Հիսէին դէմ

Գե. Նե. Նր. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Գե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ 1—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



Հիմնադրվել է 1782 թ. հունիսի 1-ին
 Կը գործէ ի ՊՈՂՈՅ 1869 թ. Ն. Վ. Ն.

Ուր. ԱՊՈԼՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Իրամագրուիս եւ պահեստի դրամ

Ուր. ոսկի 4,218,000

ՖԻՆԻՔՍ ասիկ հրահան դէմ Ապահ-
 վագրական Ընկերութիւն մըն է. ծանօթ
 իս պատուաւորութեամբ եւ վնասուց մէջ
 իր անմիջական վճարումներով:

ՖԻՆԻՔՍ կ'ապահովագրէ հողերի եւ
 կայանի դէմ տվէն ահապ անյարժ եւ
 չարժան ստացուածք, յոյժ նպատաւոր
 պայմաններով:

Ընկերութեան նախարանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆՄԻՋԱԿԱՆ
 ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՆԱՍՈՒՑ. Յաւոր վնաս-
 րած է առաւել քան 27,000,000 ոսկի.

Ընդհ. գործակալ Պալսոյ եւ գաւառ-
 ապ. Գ. ՎԱՐՐԻԱՆԵԱՆ

Վիթայիս խան, Պանֆ Օքոմանի ֆոյ
 Ղալաքիս:

Փոխ գործակալք Պալիս

ՌՈՒՐ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԻՔԷԱՆ

Էմին պէյ խան Ֆնսլիան խան

Չնիշ քիոգերու

2—10

Ա. ԷՆԻՍԷՐԶԵԱՆ

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոյց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղեցիկ զինեռով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեան ջերմ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կենթարկուին միշտ անձինք. որ շահաբաժիններու բարգման (accumulation d'es bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համալ, Բասաժ Քաթրեր Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լիայէթ Սան: — Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր

քաղաքացի մէջ

3-10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԴՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդգեմ հրդեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւունքն է Ի Կ. Պոլիս, Քուէի Լիօն

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրսնեակ, Պոլիս, Ալեքսանդր խան,

3-10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎՃԱՍՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհաբեղեցնելու, ամեն օրաց կախ կարասիներու եւ ամենեւնի նորածնու

հազուսներու, ելլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց ապրանքներուն տեսակները աւելի ճշգրտեցնելու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում ապրու հաշու հաշու հաշու, ՈՍԿԵՐԶՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զտաւ. կիներու եւ տղաներու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ԶԳԵՍՏԵՂԵՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօնաֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամբաներ, աֆիսէներ եւ այլն.) ճոխ մթերանոց մը հաստատած ենք. խիստ դիւրամատչելի գիններով, եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հաճին դիմել վերոյիշեալ վաճառատները, ուրկէ անտարակոյս անհուն գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն աղամանդեալ, գոհաբեղեցնողները երբ գործածուած ըլլաւ մնացած ըլլաւ՝ հարիւրին 10 զեղչով եւ կտուներն: Իսկ ապառիկ ծախուած եւ անվճար մնացած միմիայն աղամանդեալ, գոհաբեղեցնողներն ալ հարիւրին 15 զեղչով եւ կտուներն:

3 - 10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարաճական վճարմանց համար հաւաքիչներ ընդմիջող պատրաստ են:

ՄԵՇ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՒՅ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 13 Կ. ՊՈՒՄ



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուլքազով արտօնուած

Կեդրոնաւորին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂ, ՓՈՒՍԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԴԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԱԿՈՒՄՎ ԵՒ ՇՈՒԿԵՆԱԻՈՎ ՈՒՂԵՒՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԹԱՐ, բուելուն դէմ:

Ընկերութեան զրամագրուելը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

142,585,000 »

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամագրուելու եւ վճարուց հատուցում


314,768,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

56,585,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Աղաբեան խան, Վոյվոտա, Ղալաթիա:

3 - 10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենեկայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ դիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Բ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՍԻՆԿԵՐԻ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒԹՅՈՒՆ

- | | | |
|---------|---|---|
| ԲԵՐԱ | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամլէլին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյաղլիտ, Թրամլէլի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԵԻԻՏԱՐ | | Չարը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կատարեալ երաշխաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

5-10

ԿԱՐԱՊԵՏ Է. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգմանած գիրքերէն հետեւեալները կը գտնուին Տէր-Մինասեան գրառանը եւ մայրաքաղաքի միւս հայ գրաւորներուն քով.	հասոք	դր.
Կարմիր մաքուց երդումը	2	10
Ընտանեկան	2	15
Փարիզի ամուսնութիւնները	1	2
Թափառական Հրեայ	4	50
Արուարձանին աղան	3	15
Հանրագիտութիւն տեղի	1	5

Սկզբունք Բաղ. Տնտեսական	1	4
Ընտանեկան գաղութներ	3	15

9-10

ՀԱՄԱՌՈՏ ՕՍՄ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ի պէս Ազգ. Գաղութական վարժարանաց գրեց ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ
Կեդրոնատեղին է Կ. Պօլիս Չաքմաքըլար
Ձիւմպիւլի խան, Փափագեան Միւրաճ
էֆի Կապառանը. Գին 100 ՓԱՐԱ10-10